ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-8/26-I/IIAP-ASNET

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Գիտության ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 80 954 300 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 80 954 300 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀՎՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	0014, ք. Երևան, ՀՀ, Պ.Սևակ 1 Հ/հ՝ 900018005638 ՀՎՀՀ՝ 00008698 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ _____ Կ. S. (ստորագրություն) Կարեն Բորիսի Ղարիբյան	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Կ.S. (ստորագրություն) Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) Թադևոսյան Ռոբերտ Նորայրի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-8/26-I/IIAP-ASNET պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-8/26-I/IIAP-ASNET պայմանագրի գնի վերաբերյալ՝ 80 954 300 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

_____ Կ. S.
(ստորագրություն)

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝

_____ Կ. S.
(ստորագրություն)

Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-8/26-I/IIAP-ASNET պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Գիտության ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	1
Այլ պարբերականում հրապարակում՝	2
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	2

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Սահակյան Հասմիկ Արտեմի
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-8/26-I/IIAP-ASNET պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գիտության ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	16 500 000	3 300 000	4 125 000	4 125 000	4 950 000
2.	տնտեսական ծախսեր՝	51 077 000	10 215 400	12 769 250	12 769 250	15 323 100
3.	այլ ծախսեր՝	13 377 300	2 675 460	3 344 325	3 344 325	4 013 190
Ընդամենը՝		80 954 300	16 190 860	20 238 575	20 238 575	24 286 290

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Ռուզաննա Մելիքսեթի Մելիքյան
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-8/26-I/IIAP-ASNET պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**51 077 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	700 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	0
4.	*կապի ծառայություն*	11 677 000
5.	*աղբահանություն*	0
6.	տրանսպորտային ծախսեր	200 000
7.	էլեկտրաէներգիայի ծառայություն (Գերհամակարգիչ)	38 500 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**13 377 300**
1.	Սարքեր, սարքավորումներ	1 683 000
2.	Նյութեր	45 000
3.	ծառայություններ	300 000
4.	Ծրագրային համակարգերի սպասարկում և զարգացում (grants.hesc.am, orgs.hesc.am համակարգեր)	11 000 000
5.	Միջազգային գիտական միջոցառման մասնակցություն	300 000
6.	այլ ծախսեր	49 300

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ Հրաչյա Վոլոդյայի Ասցատրյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Ռուզաննա Մելիքսեթի Մելիքյան
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025թ.
N 1-8/26-I/11AP- ASNET պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Գիտական ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանման ու զարգացման» ծրագրի

(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Կատարել Գիտահետազոտական կոմպյուտերային ցանցի (ԳԿՑ, ASNET-AM, NREN) սպասարկման և զարգացման աշխատանքներ, որի նպատակն է ստեղծել գիտության և կրթության ոլորտի համար տարածաշրջանային գերարագ ինտերնետային ցանցը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Գիտահետազոտական կոմպյուտերային ցանցը (ԳԿՑ) միավորում է ավելի քան 65 կազմակերպություն, այդ թվում Գիտությունների ազգային ակադեմիայի կազմակերպություններ, գիտահետազոտական ինստիտուտներ (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ), կրթական համալսարաններ (Երևանի պետական համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Երևանի պետական բժշկական համալսարան) և այլ գիտական և կրթական հաստատություններ: ԳԿՑ կազմակերպությունները միավորված են համակարգչային ցանցով, որն ունի հետևյալ ընդհանուր օգտագործման ցանցային ռեսուրսները՝ օպտիկական, ռադիոմոդեմային, առանձնացված և այլ տեսակի կապուղիներ, ինտերնետի և տեղական ցանցերի հետ կապը ապահովող երթուղավորիչներ, տեղեկատվական և ցանցային ծառայությունները /վեբ, էլ. փոստ, VoIP հեռախոսակապ և այլն/ ապահովող սերվերներ, փոխադարձ հասանելիությունը և անվտանգությունը կարգավորող սերվերներ և սարքավորումներ, հաշվողական ամպեր, բարձր արտադրողականությամբ կլաստերներ և տվյալների պահոցներ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Պահանջվում է կատարել վերոնշյալ ցանցային կառուցվածքի սպասարկման և զարգացման աշխատանքներ:

Ապահովել՝

- ԳԿՑ-ի հիմնական հանգույցների և կապուղիների շուրջօրյա (24/7) անխափան աշխատանք
- ԳԿՑ-ի մուտքը դեպի GEANT համաեվրոպական գիտական և կրթական ցանց և այլ միջազգային գիտական և կրթական ցանցեր, ապահովելով գումարային ոչ պակաս քան 1024 Մբիտ/վրկ երաշխավորված երկկողմանի IP կապուղի (առնվազն 2 անկախ ելքային/մուտքային

IP կապուղիներով), հետևյալ հնարավորություններով՝ ԳԿՑ-ին պատկանող AS47623 ավտոնոմ համակարգի ապահովում BGP երթուղման միջոցով, կապուղու մոնիթորինգի հնարավորություն

- Գիտական հետազոտությունների, գիտական հաշվարկների, գիտության առարկայական ոլորտների տվյալների հենքերի ստեղծման և օգտագործման հնարավորությունները
- Ղեկավարվող և հուսալի տվյալների փոխանցման թողունակություն (QoS)
- Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի - grants.hesc.am, orgs.hesc.am ծրագրային համակարգերի սպասարկում և զարգացում
- Անմիջական տվյալների փոխանցման երթուղավորում դեպի Ինտերնետ
- SSL հավաստագրերի wildcard տարբերակի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգ
- Meet.asnet.am բազմաֆունկցիոնալ տեսակոնֆերանսների հարթակից օգտվելու հնարավորություն
- DNS (Domain Name Service) ծառայության սպասարկում sci.am, asnet.am և այլ ԳԿՑ-ի կազմակերպություններին պատկանող դոմենների համար, դոմենների տվյալների փոփոխման համակարգով
- Էլեկտրոնային փոստ (E-Mail) ծառայության սպասարկում (ապահովելով SMTP, IMAP, Mailing Lists հնարավորությունները) ԳԿՑ-ի կազմակերպություններին պատկանող դոմենների համար, էլեկտրոնային փոստի տվյալների փոփոխման համակարգով և էլեկտրոնային փոստի հակավիրուսային և այլ պաշտպանությունով (Antivirus, Antispam, Antispyware support)
- Վեբ էլեկտրոնային փոստ (Webmail) ծառայության սպասարկում HTTPS անվտանգ միացման հնարավորությունով
- ASNET-AM ցանցի կազմակերպություններին պատկանող դոմենների համար (Apache/PHP5 with MySQL5, GD, ZLIB, LIBPNG,JPEG,FREETYPE support) ավելի քան 110 վեբ կայքերը (Web Hosting) ապահովում HTTP, HTTPS միացման և անվտանգության հնարավորություններով
- Ցանցի անվտանգության (Cybersecurity) ապահովման և բարելավման, տվյալների անվտանգ ցանցային փոխանցման (VPN, VTUN, EoIP, IP-IP, VLAN, IPVLAN, SSH, SFTP, SSL, Stunnel), բազմաշերտային ցանցային անվտանգություն (Firewall) ցանցային ներխուժման փորձերի ախտորոշման և արգելափակման աշխատանքներ
- Ցանցային տեսա և ձայնահեռարձակման ապահովում (Livestreaming, Video & Voice Webcasting),
- Գործնական հանդիպումների, աշխատաժողովների և հեռակոնֆերանսների կազմակերպում
- ԳԿՑ-ի կազմակերպությունների համար ներքին և իրական IP-հասցեների հատկացում և սպասարկում

- ԳԿՑ-ի կազմակերպություններին պատկանող ցանցային սերվերների և ծառայությունների հեռակառավարում
- Սերվերների և երթուղավորիչների կարգաբերում, տեղադրում և սպասարկում (Server/Router installation and maintenance)
- Տվյալների արխիվային պահպանում և վերականգնում (Archive Backup/Restore)
- Օգտագործողների սպասարկում և խորհրդատվություն (հեռախոսով, էլ. փոստով, աշխատատեղում, սոց.ցանցերով, տելեգրամ ալիքով)
- Ցանցային կառուցվածքի և ծառայությունների փոփոխման և կատարելագործման նախագծերի պատրաստման տեխնիկական խորհրդատվություն
- ԳԿՑ-ի օգտագործողների ուսուցում տեղեկատվական տեխնոլոգիայի ոլորտում
- Ցանցային աշխատանքների մոնիտորինգի ծառայություններ (MRTG, Nagios, MRTG, Nagios, NfSen, Smokeping, Cacti և այլ)
- IP հասցեների AS47623 ավտոնոմ համակարգի սպասարկում
- EoIP ծառայության ապահովում և սպասարկում
- GRID և ամպային ռեսուրսների անվտանգության, պահուստավորման, պահպանման աշխատանքներ
- Ամպային պահոցների տրամադրման և ենթակառուցվածք որպես ծառայություն (IaaS) ծառայությունների տրամադրման աշխատանքներ
- Հայկական դաշնային նույնականության հետազոտությունների և կրթության (AFIRE) ծառայության (afire.asnet.am) աշխատանքների բարելավում, միասնական մուտքի ապահովում
- Viewmon համակարգի սպասարկում
- Փոստային ցանկերի ուղեկցման աշխատանքներ Mailing List
- Հեռավար ուսուցման հարթակի edu.asnet.am մշակման և զարգացման աշխատանքներ
- SDN ցանցային տեխնոլոգիայի իրականացում ցանցի հիմնական երթուղավորիչների վրա
- eduroam ծառայության բարելավում (նոր կազմակերպությունների ներգրավում, backend ծառայության կատարելագործում (Radius, LDAP, others)
- VoIP ծառայության բարելավում (վերակազմավորել համակարգը, ավելացնել նոր սերվեր)
- DNS ծառայության անվտանգության ապահովում
- Ցանցային ռեսուրսների օգտագործման համար կենտրոնացված մուտքի կազմակերպում, (eduroam, mail, hosting, etc)

Կազմակերպության տնօրեն _____ (Հրաչյա Ասցատրյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Ռոբերտ Թադևոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025թ.
N 1-8/26-I/IIAP-ASNET պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Գիտական ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանման ու զարգացման» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1.	Գիտական կազմակերպությունների հետ կապը ապահովող երթուղավորիչների սպասարկում	65 գիտական կազմակեր-պու-թյունների հետ ապահովել մշտական կապ (24 /7)	Շուրջօրյա տվյալների փոխանցման հնարավորության ապահովում և սպասարկում	31.12.26թ
2.	Համացանցի հետ կապուղու սպասարկում	Անցկացնել մրցույթ և ընտրել կապի մատակարարողին	Կարիքների բացահայտում, մշտադիտարկում, պայմանների բավարարում	31.12.26թ
3.	Միջազգային գիտակրթական (այդ թվում GEANT-ի) հետ հատուկ կապի ապահովում	Գիտական բարձր վարկանիշ ունեցող համաեվրոպական հաստատությունների հետ կապուղու ապահովում	Գիտական և հետազոտական տվյալների և արդյունքների փոխանակման ապահովում	31.12.26թ
4.	Գիտական հաշվարկների և շտեմարանների հետ աշխատանքի ապահովում	Գրադարանային, բարձր արտադրողականությամբ հաշվողական և շտեմարանային համակարգերից օգտվելու հնարավորություն	Մուտքի և համապատասխան գործառույթների կազմակերպում և ուղեկցում	31.12.26թ
5.	Տեղեկատվական սերվերների (փոստային սերվերների, վեբ-կայքերի) աշխատանքի ապահովում	Գիտահետազոտական և կրթական տեղեկությունների և տվյալների հենքերի տեղադրումը համացանցում (Mail, DNS, Web Hosting)	Ցանցային տեղեկատվական ռեսուրսների հասանելիության ապահովումը համացանցում	31.12.26թ
6.	Վստահության, ինքնության և ցանցային անվտանգության ծառայությունների սպասարկում	Ցանցային անվտանգության արտաքին և ներքին ընթացակարգերի ապահովում ազգային անվտանգության պահանջների համապատասխան	Տվյալների անվտանգ ցանցային փոխանցում	31.12.26թ
7.	Մեծածավալ հաշվարկների և ամպային ծառայությունների ապահովում	Վեբ միջավայրում ստեղծել և կառավարել վիրտուալ մեքենաներ և	«Ենթակառուցվածքը որպես ծառայություն» (Infrastructure as a Service) ամպային ծառայության սպասարկում և ուղեկցում	31.12.26թ

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

		կապակցել վիրտուալ միջավայրերը		
8.	Առցանց իրական ժամանակի ծառայությունների ապահովում	Գիտական հրատարակություններից, հեռաուսուցման և հեռակոնֆերանսների համակարգերից, ցածր հապաղման տեսաձայնային համակարգերից օգտվելու հնարավորություն	Meet.asnet.am բազմաֆունկցիոնալ տեսակոնֆերանսների հարթակի սպասարկում, հեռաուսուցման edu.asnet.am համակարգերի սպասարկում, հայելի սերվերների mirrors.asnet.amուղեկցում	31.12.26թ
9.	Վստահության, ինքնության և անվտանգության ծառայությունների սպասարկում	SSL հավաստագրերի տրամադրման ծառայությունների սպասարկում՝ առցանց գործարքներն և տվյալների գաղտնիությունն ու անվտանգությունն ապահովելու համար	SSL հավաստագրերի wildcard տարբերակի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգի սպասարկում	31.12.26թ
10.	Առցանց իրական ժամանակի մշտադիտարկման ծառայությունների և log ֆայլերի կառավարման ծառայությունների սպասարկում	Տվյալների հոսքերի մշտադիտարկման ծառայություն	Ցանցային OSPF արձանագրությունների թեստավորվում և անընդհատ մշտադիտարկում	31.12.26թ

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Հրաչյա Ասցատրյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Ռոբերտ Թադևոսյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*